ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հոկտեմբերի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Մամուն Հարիրիին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջև առկա ջերմ եւ սերտ հարաբերություններին, ինչպես նաեւ Սիրիայում կրոնների համերաշխ գոյակցությանը, որի ականատեսն է եղել հովվապետական իր այցի ժամանակ: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը նաեւ մտահոգություն հայտնեց Սիրիայում տիրող քաղաքական բարդ իրավիճակի համար՝ մաղթելով, որ Աստծո օգնականությամբ Սիրիայի ժողովուրդը հաղթահարի իր առջեւ ծառացած խոչընդոտները:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, հաջողություն ցանկանալով պարոն Հարիրիի դիվանագիտական առաքելությանը, նաեւ մաղթեց, որ ցավն ու տառապանքը հեռու մնան Սիրիայի ժողովրդից եւ խաղաղությունը շուտով վերականգնվի երկրում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հոկտեմբերի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց ՀՀ-ում Լիբանանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Զիադ Աթթալային:

Զրույցի ընթացքում անդրադառնալով Հայաստան-Լիբանան հարաբերություններին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ դրանք մշտապես աչքի են ընկել իրենց առանձնահատկությամբ: Նորին Սրբությունը նաեւ իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Լիբանանի կառավարությանն ու ժողովրդին՝ պատմության ընթացքում եւ այսօր էլ հայերի հանդեպ ցուցաբերած բարյացակամ եւ մարդասեր վերաբերմունքի համար:

Իր հերթին, Լիբանանի ժամանակավոր հավատարմատարը, ուրախություն հայտնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալվելու համար, հավաստիացրեց, որ ամեն ջանք գործադրելու է երկու երկրների հարաբերությունների առավել սերտացման եւ ամրապնդման, ինչպես նաեւ տնտեսական համագործակցության առավել զարգացման ուղղությամբ: Խոսելով Լիբանանի կառուցման գործում լիբանանահայերի մեծ վաստակի մասին՝ պարոն

Աթթալան հատկապես կարեւորեց հայության գործուն մասնակցությունը Լիբանանի տնտեսական կյանքում:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված պահի ու պահպանի Լիբանանը խաղաղության եւ անվտանգության մեջ, իսկ հավատարմատարին շնորհի բարի եւ արդյունաշատ առաքելություն Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Լիբանանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի:

Ողջունելով մեծարգո հյուրին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ սերտ հարաբերություններին՝ նշելով նաեւ, որ լիբանանահայերը, որպես արժանավոր քաղաքացիներ մշտապես գնահատվել ու սիրվել են Լիբանանի ժողովրդի ու իշխանությունների կողմից: Այս առիթով Նորին Սրբությունն ի դեմս պարոն Նաբիհ Բըրրիի իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Լիբանանի ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության տարիներից ի վեր Լիբանանում հանգրվան գտած հայորդիների հանդեպ ցուցաբերած ջերմ ընդունելության եւ հոգատարության համար: Վեհափառ Հայրապետը նաեւ իր մասնավոր շնորհակալությունն ուղղեց Լիբանանի կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու եւ արցախյան հակամարտության կարգավորման հարցում որդեգրած հավասարակշիռ դիրքորոշման համար:

Իր հերթին՝ Լիբանանի Խորհրդարանի նախագահը մեծ գնահատանքով խոսեց Լիբանանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում հայ քաղաքացիների ունեցած կարեւոր ներդրման մասին, վերհիշեց նաեւ 1997 թվականի իր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու ներգրավվածության, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված կրոնական առաջնորդների համատեղ ջանքերի մասին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, խաղաղություն եւ բարօրություն մաղթելով Լիբանանին ու լիբանանյան ժողովրդին, վստահություն հայտնեց, որ խորհրդարանի նախագահ Բըրրիի այցը Հայաստան նոր լիցք կհաղորդի երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ